

ԲԱՌԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

Մասարիխայ

18-րդ դարի բժշկապետ Գրիգորիսի «Ջննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց» աշխատության մեջ (Երևան, 1962) հանդիպում է մասարիխայ բառը՝ գործածված չորս անգամ: Վկայություններն են. «Նայ քարշեաց ի յայն երակնոյն, որ ասին մասարիխայ: Մինչև հասնի ի մասարիխան: Նայ քարշէ ի յայն երակացն, որ անուանին մասարիխայ, և յերբ մասարիխան դարտակնայ, նայ քարշէ ի բարակ աղեսցն» (էջ 120): Գրքի «Բարաբան օտար տերմինների» բաժնում մասարիխան հարցականով համարված է արաբերեն բառ, առանց փոխատու բառի նշումով, և բացատրված է՝ «վերին սիներակ»: Կարծում ենք, որ բառի անմիջական աղբյուրը պրսկ. masariga բառն է, որը կազմախոսական տերմին է և նշանակում է միջընդերք (լատ. Mesenterium), որը Վ. Արծրունու «Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական տերմինների բառարանում» մեկնվում է՝ «որովայնամզի երկտակ ծայր, որից կախված են բարակ աղիքները և որի միջով անցնում են սնող անոթներն ու ներվերը» (էջ 64—65):

Մարդակ

Բառը միակ հիշատակությամբ հանդիպում է Գրիգորիսի հիշյալ բժշկարանում. «Եւ անվնասն ի յայս շտերոյս այն է, որ տեսնուս զինքն ի դրացէ ի յերեսն այն կեղևոյն, որ քերած յեղջիորի նման է, և ի մարդակէն ի յետ լինի. իսկ վնասակար շիտն այն է, որ լինի ներքև կեղևոյն, որ է եղջիւրային կեղև և այլ պիղծ քան զայն, որ ի վերայ մարդակին լինի» (էջ 82): Գրքի «անձանոթ բառեր» բաժնում, որտեղ բերված են հայ մատենագրության մեջ առաջին անգամ հանդիպող կամ այլ իմաստով միայն գործածված բառերը, մարդակ-ի դիմաց տրված է «աչքի ինչ-որ ներքին օրգան-հյուսվածք» անորոշ բացատրությունը:

Նշելի է, որ դասական գրաբարում գործածված և բառարաններում արձանագրված մարդակ բառը՝ «շինությունների կտուրների վրա երկարությանը գցված գերան» առումով, որևէ կապ չունի քննվող համանուն բառի հետ: Վերջինս պարսկական կամ արաբական փոխառություն է՝ mārđāk բառից, որ նշանակում է «քիթ» (աչքի):

Մորեստան

Այս բառը, որ ծանոթ չէ հայերեն բառարաններին, եզակի վկայությամբ հանդիպում է 16-րդ դարի պանդուխտ տաղասաց Մինաս Թոխաթցու «Ողբ ի վերայ Օլախաց երկրի հանրուն» չափածո գործում. «Բազում առմաշեր սրփոեցան, քաղքին տըներն և մորեստան» (տե՛ս Ակինեան Ն., Հինգ պանդուխտ տաղասացներ, Վիեննա, 1921, էջ 90): Բառի ծագման կապակցությամբ գրքի հրատարակիչը նշում է. «Կայ ռում. mora աղոթիք, ասկէ թերևս ջրաղացք»: Մեր կարծիքով, բերված նշանակությունը ճիշտ չի բացահայտում քննվող բառի, իմաստային կողմը տվյալ բնագրում: Թվում է, որ մորեստանը ուղղակիորեն կապվում է լատ. mora «կանգ առնելը, դադարելը, մնալը» բառի հետ՝ հավաքական հոգնակի կազմող ստանա ամսանցի հարակցությամբ, ըստ որում հոգնակի ձևով արտահայտում է «օբևաններ, իջևանատներ» իմաստը:

Գուսիցընի

Բառի միակ գրական վկայությունն արձանագրված է Գիրք վաստակոցում. «Չէ փոյ» զագետակն սրբել, այլ սանտրել և պոսիցընել» (Գ.Վ. Վենետիկ, 1877, էջ 201):

Հ. Աճառյանը հարցականով բերում է գրքի բառացանկում տրված բացատրությունը և փորձում է բառը կապել արաբ. barq «փայլեցնել, զարդարել», barrag «պայծառ, յտակ»

քառաձևերի հետ, միաժամանակ նշելով, որ «կա թրք. braq, արևել. թրք. brax «թո՛ղ, քա՛ց թող», բայց braqmaq «բաց թողնել» (ՀԱԲ, 2-րդ հրատ., հո. Դ, էջ 108): Ստ. Մալխասյանցը բառը երկբայորեն հղում է Բրախե տալ, Բրախել բայերին, փակագծերի մեջ ներկայացնելով նաև Հ. Աճառյանի հիշյալ ստուգաբանությունը (ՀԲԲ, հո. Դ, էջ 120): ԲՁՆՎող բայական ձևը, որ տեղ չի գտել մյուս բառարաններում, անշուշտ, փոխառություն է, սակայն ծագումով և իմաստով կապված է թուրքերեն barak (ջԼ) բառի հետ, որ նշանակում է՝ «երկար՝ խիտ մազերով, մազոտ»: Հետևաբար, Գիրք վաստակոցի հրատարակիչ Ղ. Ալիշանի մեկնությունը, որն է՝ «մազերը սանրել՝ հարդարել՝ մի կողմ հավաքել», միանգամայն ճիշտ է արտահայտում բառի նշանակությունը:

Սեն, թե՛ Սենփոր

Բառս եզակի վկայությամբ հանդիպում է «Քարթլիս ցխովրեքա», այսինքն՝ «Վրաց պատմություն» երկի հայերեն թարգմանության մեջ. «Եւ եղև ի նոսա ախտ՝ սեն փորի և գիտացնի թէ ի խաչէն է պատուհասն» (ԲՅ, էջ 218):

Նոր հայկազյան բառարանում որպես գլխաբառ տրված է սենփոր ձևը, որն ուղղակի սեն փորի կապակցության տարրնթերցվածքն է: Համարելով բառը ծագումով անհայտ, բառգրքի հեղինակները տալիս են նրա մոտավոր ճիշտ բացատրությունը՝ խօթութիւն ինչ (կամ փորհարութիւն) (ՆՀԲ, հո. Բ, էջ 706):

Հ. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում», ՆՀԲ-ի հետևողությամբ, սենփոր-ը համարում է որպես առանձին բառ և թիւեցնում պատահական նմանություն ունեցող հունարեն սոմֆօզդ կամ սոմֆօզա «դժբախտություն, աղետ» բառից, ընդ որում «գաճազան հիւանդութիւնների հաւաքում» իմաստով (հուն. սոմ—ֆօզօ «հաւաքել» բայից): Միաժամանակ առաջարկում է հայերեն բառաձևը ուղղել սինփորի կամ սինփոր (ՀԱԲ, հո. Զ, էջ 182):

Ստ. Մալխասյանցը, հետևելով Աճառյանին, բառը համարում է հուն. փոխառություն և տալիս է նույն անորոշ մեկնությունը՝ «մի տեսակ հիւանդութիւն», միաժամանակ նշելով, որ «աւելի հաւանական է վերցնել ուղղ. հողովը սենփորի իբրև ած. = համաճարակ, ախտ սենփորի = համաճարակ հիւանդութիւն, ինչպես ժանտախտ, խոլերա ևն» (ՀԲԲ, հո. Դ, էջ 200):

Մ. Բրոսեն, որը հիշյալ երկը թարգմանել է ֆրանսերեն, քննվող բառը, ըստ Հ. Աճառյանի, մեկնում է իբրև dysenterie՝ կապելով այն փոր բառի հետ, «ինչպես որ վեճնտկեան հրատարակիչն էլ սրբագրում է «ախտս իմն փորի» փխ. ախտ սենփորի» (ՀԱԲ, հո. Զ, էջ 183):

Ինչպես կտեսնենք, վերջին մեկնությունները, որոնք ավելի ընդունելի ու հավանական են, օգնում են լրիվ ճշգրտելու բառի ծագումն ու իմաստը:

Նախ՝ բառի ուղիղ և ճիշտ ձևն է սեն, որի աղբյուրը վրաց. სენი (seni) «հիվանդություն, ցավ, վարակ» բառն է՝ ի (i)-ի անկմամբ: Դիտելի է, որ հայերենում վրացերենից փոխառյալ բառերի վերջին ի ձայնավորի անկումը հնչյունափոխական օրինաչափ երևույթ է, որն արձանագրված է մի շարք բառերում, ինչպես դեղեկուլ—didebuli, թուկ—thoki, կրուլ—kruli և այլն:

Վերը բերված քննադրային հատվածում սեն փորի կապակցությունը բառացի նշանակում է «փորի հիվանդություն՝ ցավ», իսկ ավելի որոշակի՝ «աղիքների սուր վարակիչ հիվանդություն, որն արտահայտվում է արյունային լույծով, արյունալուծ, թանջ» (լատ. Dysenteria):

Ողիքերոն և Ստարակ

Այս բառերն եզակի գործածությամբ վկայված են Մ. Կաղանկատվացու «Պատմութիւն Լիւումնից աշխարհի» երկում, միևնույն նախադասության մեջ. Պատմութեանս ոսկեհուռս ստարակս և զղիպակս ողիքերոնս, զգուարճատեսիլ ծիրանիս և որ ինչ մեծագանս գոյնք ըստ թուոյ միահասուռս (Գիրք 2-րդ, գլ. ԻԸ):

Երկու բառերն էլ իրենց ձևով և իմաստով ընդհանրապես արձանագրված չեն հայերենի բառարաններում և տարբեր աղբյուրով սխալ են մեկնաբանվել: Ըստ Վ. Առաքելյանի՝ անգլիացի հայագետ Դոպլեթը երկի անգլերեն թարգմանության մեջ ողիքերոն բառի համար առաջարկում է «կարմրաներկ» բացատրությունը, որը, կարծես թե, տվյալ դեպքում ընդունելի է, քանի որ խոսքը գույների մասին է: Բայց, ինչպես կտեսնենք ստորև, այդ թարգմանությունն ամբողջապես չի բացահայտում բառի արտահայտած նշանակությունը՝ նրա ծագումը ճիշտ չըմբռնելու պատճառով:

ԲՁՆՎող բառը, որ քուսանուն է, հնչյունափոխված որոշակի ձևով փոխ է առնված հուն.

ελλεβορος բառից: Այն կեղծ դամնիւմեր (*Veratrum album*) բույսն է, որ պատկանում է Շուշանազգիների ընտանիքին և ունի գեղեցիկ սպիտակ ծաղիկներ, իսկ բնագրում բառն արտահայտում է «այդ բույսի ծաղիկների սպիտակ գույնով» նշանակությունը:

Իր հերթին նշենք, որ բնագրի ստաւրակ (ստորակ) բառն երկի աշխարհաբար թարգմանության տողատակում բերված հեղինակային նույն վկայության մեջ թյուրիմացաբար մասնատվել է և դիտվել որպես ըստ օրակա անհասկանալի բառակապակցություն (տե՛ս էջ 155):

Բանն այն է, որ հայ հին և միջնադարյան մատենագրության մեջ գրչական տարբեր ձևերով (ստիրակ, ստորաքս, ստարաք, ստարասխ ևն) հանդիպող ստաւրակ բառը նույնպես բուսանուն է, որ կապվում է հուն. *στοραξ*, լատ. *storax*, *styrax* բառերի հետ՝ արտահայտելով ստյուրակայա նշանակությունը, այսինքն՝ ստյուրակ կամ շեր (*Styxax*) ծառի ծաղիկների գույնով:

Փառ

Բառարանային գրանցում ստացած և իբրև համանուն դիտվող այս բառը միակ հեղինակային վկայությամբ առաջին անգամ տեղ է գտել Նոր հայկազյան բառարանում (=ՆՀԲ)՝ «Ի գեղեցիկ ձայնաւորութիւն, և ի քա՛ղցր երգս (պարծիցիս) . ո՛չ որպէս սոխակն և ճըպտուն, և փաղն, և յուշկապարհիկն» (նսկ. փիլիպ.):

Հ. Աճառյանը չստուգաբանելով բառը՝ անորոշ կերպով գրում է. «մի տեսակ թռչուն» (Հայերէն արմատական բառարան, հտ. 2, էջ 1121): Ստ. Մալխասյանցը, հենվելով Աճառյանի մեկնության վրա, բառին տալիս է «անորոշ տեսակի թռչուն» բացատրությունը, չնայած միաժամանակ նշում է՝ հմմտ. փաղարիկ, իսկ վերջինս նշանակությունը բացատրելիս լրիվ հետևում է ՆՀԲ-ին (Հայերէն բացատրական բառարան, հտ. 4-րդ, էջ 481):

Ըստ ամենայնի, հիշյալ բառը դեռևս հնում՝ Համամ Արևելցու կողմից ճիշտ ստուգաբանված փաղարիկ բառաձևի զգալիորեն հնչյունափոխված տարբերակն է, որն, անշուշտ, կապվում է հուն. *Φαλαργος*, *Φαλιργος*, լատ. *Phalaris* բառերի հետ, ինչպես իրավացիորեն համարել են ՆՀԲ-ի հեղինակները, սակայն բացատրությունը ներկայացրել են խիստ ընդհանուր գծերով. «թռչուն ջրային և քաղցրաձայն՝ նման կարապոյ, բայց սեւս, միշ սպիտակ ունելով ի ճակատն» (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. Բ, էջ 925):

Պարզ է, որ տվյալ նկարագրական բացատրությունից հնարավոր չէ գաղափար կազմել, թե խոսքը ինչ տեսակի թռչունի մասին է:

Մեր կարծիքով, փառ կամ փաղարիկ բառերի տակ պետք է հասկանալ Սերինոսազգիների ընտանիքին պատկանող դեղձանիկ (*Serinus canaria*) երգեցիկ թռչունը:

Միադեալ

Բառս անցյալ դերբայի ձևով և իմաստային անսովոր առումով գործածված է «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում. Առ ի չժոժել ճիւղեալ պրշակաց տան միոջ՝ զգոգ առեալ ձեղունն, լինելով նմա անգերծանելի ծուղակ, սուզեալ ընկեաւ զնա ի ձեռս արանց քաջաց (տպ. քաջանց) (Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985, էջ 428):

Նոր հայկազյան բառարանը, վկայակոչելով նույն բնագրային օրինակը, բառի նշանակությունը բացատրում է հետևյալ կերպ՝ «որպես ճիւղ եղեալ՝ ըստ այլանդակութեան, կամ ըստ վտիտ տկարութեան» (ՆՀԲ, հտ. Բ, էջ 181): Հ. Աճառյանը ճիւղ բառահոդվածում քննվող բառի վերաբերյալ գրում է. «Նշանակութեան տարօրինակ զարգացմամբ կայ ճիւղեալ «եճացած, փլիփած» (Հայերէն արմատական բառարան, հտ. Դ, էջ 655): Ստ. Մալխասյանցի բառարանում որպես զխաբառ բերված ճիւղեալ ձևը, որի դիմաց տրվում է ւծ. (ածական) խոսքիմասային նշումը, բացատրված է՝ «հաւանօրէն՝ ճղճված, ճաքճած» (առաստաղի գերանների մասին) (Հայերէն բացատրական բառարան, հտ. 3-րդ, էջ 211):

Ինչպես տեսնում ենք, հիշատակված վերջին երկու բառարաններում բառն որոշակիորեն վերցված է անականի կիրառությամբ՝ կազմելով «մարդակ» նշանակությունն ունեցող պրշակի հետ որոշի և որոշյալի կապակցություն, որով և ավելի պարզ է դառնում բառի արտահայտած մթին իմաստը:

Իրոք, բնագրում բառը գործածվել է «խարիված, քայքայված, ճաքճված, փլիփած» նշանակությամբ, որն անտարակույս վերաբերում է առաստաղի մարդակներին:

Այստեղ ավելորդ չէ նշել, որ երկի աշխարհաբար թարգմանության մեջ բառը տրված է «գալարվելով քարձրանալ» (էջ 429) խիստ կասկածելի նշանակությամբ, ընդ որում հմուտ թարգմանիչն այս դեպքում բնագրի պրշակ բառն անարդարացի կերպով դուրս է գցել՝ անտեսելով նրա անհրաժեշտ թարգմանությունը, որին, ինչպես տեսանք, անմիջականորեն առնչվում էր խնդրո առարկա բառը:

Մատնանշան, թե՛ Մատնանշան

Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի ձեռագրերում հանդիպում են գրչական տարբերությամբ գործածված մատնանշան և մատնանշան բառերը, որոնցից առաջինը, իբրև գլխաբառ, գրանցում է ստացել Նոր հայկազյան բառարանում, իսկ երկրորդը որևէ ձևով ընդհանրապես չի հիշատակվում: Հեռնելով ՆՀԲ-ին՝ Հ. Աճառյանը և Ստ. Մալխասյանցը Հույնպես վկայակոչում են ձեռագրերում մեծամասամբ հանդիպող մատնանշան բառը՝ ամենայն հավանականությամբ ծանոթ չլինելով մատնանշան բառաձևին:

Աճառյանը, ավելի ճիշտ է Մ. Աբեղյանը, որ Կորյունի քննական բնագիրը հրատարակության պատրաստելիս առաջնությունը տվել է մատնանշան բառին՝ մյուսը դիտելով սուսկ նույն բառի ոչ ճիշտ տարբերակը: Ահա այն հեղինակային վկայությունը, որտեղ գործածվել է այդ երկու բառերից որևէ մեկը. Վասն նորին լուսատր վարդապետութեան և հրեշտակաբար կրօնիցն առաքինութեան զմտաւ անելով յիշատակարանս առանձին մատնանշան (ՆՀԲ-ում՝ մատնանշան) ծաղկեցուցանել (Կորին, Վարք Մաշտոցի, Ե., 1941, էջ 22):

Կարծում ենք, որ գրաբարի բառարաններում մատնանշանի փոխարեն պետք է տեղ գտնի մատնանշան բառը՝ «մատյանում նշանակված» գրված» իմաստային առումով:

Աքինոս և Պրտու

Առաջին անգամ **աքինոս** բառի ծագումը ստույգ կերպով նշված է Նոր հայկազյան բառարանում՝ իբրև փոխառություն հուն. σχοτνος բառից, սակայն բերված բացատրությունը՝ «պրտու, և չուան պրտուեղէն», ճշգրտման կարիք ունի:

Նախապես նշենք, որ այդ բառը գրեթե նույն մեկնությամբ տեղ է գտել Ֆաև Հ. Աճառյանի արմատական և Ստ. Մալխասյանցի բացատրական բառարաններում:

Արդ, գուցե տվյալ բառի «չուան պրտուեղէն» իմաստն ընդունելի է, քայք «պրտու» նշանակությունն այնքան էլ համոզիչ չէ:

Պրտուն, որ Հ. Աճառյանի արմատական բառարանում բացատրված է «կնին, ճիլ, սեզ, շամբուտի եղեզ» բառաշարքով (ՀԱԲ, հտ. Ե, էջ 1177), դիտվել է ոչ ճիշտ ստուգաբանված բառ, չնայած այն, իբրև պարզորոշ փոխառություն, պրակ. արաբ. bārdI «պապիրուս» բառի հնչյունափոխված ձևն է, ինչպես ժամանակին նկատել են ՆՀԲ-ի հեղինակները՝ վկայակոչելով արաբերեն **պերտի**, **պերտիյե** ձևերը, իսկ Գեորգ Դպիրը՝ պրակ. burdI ձևը:

Կասկածից վեր է, որ ՆՀԲ-ում **պրտուն** համարվել է Բոշխազգիների ընտանիքին պատկանող Scirpus քույր, չնայած բառափոխվածում չի հիշատակվում բերված լատինական անվանումը: Այդ բույսի մի տեսակը, ըստ տրված բացատրության, որոշակիորեն **պապիրուս** է (Cyperus papyrus), որի համար բերվում են միայն հունարեն և լատիներեն համապատասխան հոմանիշային ձևերը, որոնց զուգահեռ տրվում է նաև կնյուն-ի Juncus լատինական անվանումը:

Հետագայում Ստ. Մալխասյանցը **պրտու** բառը նույնպես ընդունելով պրակ. burdI ձևից փոխառված՝ այն ներկայացնում է որպես Scirpus բույսի մի տեսակը, որն է՝ S. lacustris (ՀԲԲ, հտ. 4-րդ, էջ 191), իսկ **պապիրուս**ը, որ բառարանում կազմում է ինքնուրույն բառափոխված, դիտվում է իբրև պրտուների առանձին տեսակ՝ վերը բերված C. papyrus լատիներեն գիտական անվան վկայակոչությամբ:

Ի դեպ, բառի ստուգաբանությունից ելնելով՝ «Բուսանոցների հայերեն-լատիներեն-ուրուերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարանում» (Ե., 1981) **պրտու** և **պապիրուս** բառերը, համարվելով հոմանիշներ, չեն առանձնացվել, այլ բերվել են մեկ բուսանվան տակ, իսկ Scirpus լատինական անվան դիմաց նշված է՝ շամբի, զգիրուկ, ճլախոտ (ռուս. ка-мыш):

Ինչ վերաբերում է **աքինոս** բառին, ապա այն ոչ թե **պրտու** բուսանունն է, այլ նույն Բոշխազգիների ընտանիքին պատկանող **ճլուկ** (Schoenus) քույրը:

Էզոնոմոս

Վկայակոչված բառը միայն մեկ անգամ հանդիպում է Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» երկում. Եւ ապա բռնաբարեալ գտորք հալոն Երիցակ Երիցուվանից մեծ էզոնոմոս, խարանազգեալ և խստակրօն ճգնաւոր, բերեալ կացուցմանն եպիսկոպոս Սիւնեաց (Թիֆլիս, 1910, էջ 72):

Ի միջի այլոց նշենք, որ բառը տեղ է գտել միայն «Միջին հայերենի բառարանում» (հտ. Ա, Ե., 1987, էջ 224), իսկ նախորդ հայերեն բառարանները, որքան էլ տարօրինակ է, ցանց են առել այդ բառի գործածությունը:

Երկի աշխարհաբար թարգմանության ծանոթագրությունների մեջ քննվող բառը, թարգմանչի բացատրությամբ, բնագրում անվերապահորեն արտահայտում է «տնտեսություն զարող, կառավարիչ, տնտեսվար» նշանակությունը (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Ե., 1986, էջ 431): Ըստ այդմ էլ աշխարհաբար բնագրում այն տրված է «տղնտեսվար» իմաստով (ն. տ., էջ 109):

Դժվար չէ կոահել, որ բառն անմիջական փոխառություն է հունարենից՝ արդեն նշված թարգմանչի կողմից: Այն, ինչ խոսք, οἰκονόμος բառն է, որն ունի իմաստային տարրեր ստումներ, որոնցից մեկն էլ վերը բերված նշանակությունն է: Պետք է նկատել, որ հունարեն բառը նշանակում է նաև «խնայող, տնտեսող, ոչ շտալլ» իմաստը: Իմաստային այս առումն են նկատի ունեցել միջին հայերենի բառարանի հեղինակները, որ բնագրային բառը ներկայացրել են նախ ածականի արժեքով, ապա՝ «խստակյաց, ժուժկալ» նշանակությամբ՝ գտնելով, որ բնագրում բառն արտահայտում է հենց այդ իմաստը:

Բ. Ս. КАЗАРЯН—Толкования слов.— Автор представляет этимологии нескольких слов, уточняет их формы и выраженные значения.